# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

# ՀՐԱՄԱՆ

« 04 » 03 20 26 թ. Թիվ 39-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի ԹԻՎ 100-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 28.1-ին հոդվածի 2-րդ մասով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2023 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրման կարգը հաստատելու մասին» թիվ 100-Լ հրամանի N 1 հավելվածի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կոմիտեի գործունեությանն օժանդակող անձինք կարող են պարգևատրվել նաև Կոմիտեի նախագահի 2015 թվականի օգոստոսի 12-ի թիվ 79-Լ հրամանով սահմանված մեդալներով և կրծքանշաններով՝ նշված հրամանով նախատեսված դեպքերում և կարգով:»:

2 Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ